Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-530[1]-10.03.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ փորձաքննություն իրականացնող մարմինները պարտավոր են իրենց կողմից տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնելու դեպքում փորձագիտական եզրակացության մեկ օրինակը ներկայացնել լիազոր մարմնին՝ այն սահմանված կարգով հաստատելուց հետո՝ եռօրյա ժամկետում, իսկ վթարի սպառնալիք արձանագրելու դեպքում՝ անմիջապես:»

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել նոր 6.1-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«6.1. Կարգադրագիրը՝ հանդիսանալով նաեւ որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրող վարչական ակտ՝ պետք է պարունակի.

12) Կարգադրագիրն ընդունող մարմնի լրիվ անվանումը.

13) Կարգադրագրի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը.

14) Կարգադրագրի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը եւ համարը.

15) Կարգադրագրով լուծվող հարցի նկարագրությունը.

16) Կարգադրագրի ընդունման իրավական հիմքը.

17) Պարտադիր կատարման կամ ձեռնպահ մնալու ենթակա գործողությունների շարադրանքը.

18) Կարգադրագրի կատարման ժամկետը.

19) Կարգադրագրի գործողության ժամկետը.

20) Կարգադրագիրն ընդունող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը եւ ստորագրությունը (ձեռագիր կամ էլեկտրոնային).

21) Կարգադրագրի բողոքարկման ժամկետը եւ մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել.

22) Կարգադրագիրն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը, եթե այն ստորագրվել է ձեռագիր:«:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«7. Կարգադրագիրը պարտադիր է դրա հասցեատերերի համար եւ ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, իսկ սահմանված ժամկետում կամովին

չկատարվելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:«:

Հոդված 4. Օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«8. Կարգադրագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա է կատարման ոչ ուշ, քան դրանով սահմանված ժամկետում, եւ վերադասության կարգով դրա բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:«:

Հոդված 5. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել 10-րդ, 11-րդ, 12-րդ եւ 13-րդ մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«10. Կարգադրագիրը ներկայացվում է հարկադիր կատարման դրանում նշված ժամկետում չկատարվելու դեպքում այդ ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

11. Կարգադրագիրը հարկադիր կատարման ներկայացնելիս Տեսչական մարմինը դրան կից ներկայացնում է այն հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը հավաստող ապացույցը եւ կատարման վերաբերյալ գրություն, որում նշվում են՝

5) Կարգադրագիրը հարկադիր կատարման ներկայացնելու տարին, ամիսը եւ ամսաթիվը.

6) Կարգադրագրի հիման վրա կատարման ենթակա գործողությունները կամ այն գործողությունները, որոնց կատարումից Կարգադրագրի հասցեատեր անձը պետք է ձեռնպահ մնա.

7) Կարգադրագրի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը եւ համարը.

8) Կարգադրագրի հասցեատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում), իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, անձի անձնագրային տվյալները կամ հանրային ծառայությունների համարանիշը, իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը եւ պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը:

12. Սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված հարկադիր կատարման վերաբերյալ գրությունը եւ օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր կարող են հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկվել, եւ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից փաստաթղթերը կարող են ստացվել օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային եղանակով:

13. Կարգադրագիրը հարկադիր կատարման ներկայացնելը դրա հասցեատիրոջը չի ազատում Կարգադրագրի պահանջը չկատարելու համար նախատեսված պատասխանատվությունից:«:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ փորձաքննություն իրականացնող մարմինները պարտավոր են իրենց կողմից տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնելու դեպքում փորձագիտական եզրակացության մեկ օրինակը ներկայացնել լիազոր մարմնին՝ այն սահմանված կարգով հաստատելուց հետո՝ եռօրյա ժամկետում, իսկ վթարի սպառնալիք արձանագրելու դեպքում՝ անմիջապես:»

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել նոր 6.1-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«6.1. Կարգադրագիրը՝ հանդիսանալով նաեւ որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրող վարչական ակտ՝ պետք է պարունակի.

12) Կարգադրագիրն ընդունող մարմնի լրիվ անվանումը.

13) Կարգադրագրի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը.

14) Կարգադրագրի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը եւ համարը.

15) Կարգադրագրով լուծվող հարցի նկարագրությունը.

16) Կարգադրագրի ընդունման իրավական հիմքը.

17) Պարտադիր կատարման կամ ձեռնպահ մնալու ենթակա գործողությունների շարադրանքը.

18) Կարգադրագրի կատարման ժամկետը.

19) Կարգադրագրի գործողության ժամկետը.

20) Կարգադրագիրն ընդունող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը եւ ստորագրությունը (ձեռագիր կամ էլեկտրոնային).

21) Կարգադրագրի բողոքարկման ժամկետը եւ մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել.

22) Կարգադրագիրն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը, եթե այն ստորագրվել է ձեռագիր:«:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«7. Կարգադրագիրը պարտադիր է դրա հասցեատերերի համար եւ ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, իսկ սահմանված ժամկետում կամովին

չկատարվելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:«:

Հոդված 4. Օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«8. Կարգադրագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա է կատարման ոչ ուշ, քան դրանով սահմանված ժամկետում, եւ վերադասության կարգով դրա բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:«:

Հոդված 5. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել 10-րդ, 11-րդ, 12-րդ եւ 13-րդ մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«10. Կարգադրագիրը ներկայացվում է հարկադիր կատարման դրանում նշված ժամկետում չկատարվելու դեպքում այդ ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

11. Կարգադրագիրը հարկադիր կատարման ներկայացնելիս Տեսչական մարմինը դրան կից ներկայացնում է այն հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը հավաստող ապացույցը եւ կատարման վերաբերյալ գրություն, որում նշվում են՝

5) Կարգադրագիրը հարկադիր կատարման ներկայացնելու տարին, ամիսը եւ ամսաթիվը.

6) Կարգադրագրի հիման վրա կատարման ենթակա գործողությունները կամ այն գործողությունները, որոնց կատարումից Կարգադրագրի հասցեատեր անձը պետք է ձեռնպահ մնա.

7) Կարգադրագրի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը եւ համարը.

8) Կարգադրագրի հասցեատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում), իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, անձի անձնագրային տվյալները կամ հանրային ծառայությունների համարանիշը, իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը եւ պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը:

12. Սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված հարկադիր կատարման վերաբերյալ գրությունը եւ օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր կարող են հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկվել, եւ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից փաստաթղթերը կարող են ստացվել օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային եղանակով:

13. Կարգադրագիրը հարկադիր կատարման ներկայացնելը դրա հասցեատիրոջը չի ազատում Կարգադրագրի պահանջը չկատարելու համար նախատեսված պատասխանատվությունից:«:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ ~~աշխատանքային~~ օրվանից~~ը~~ :

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀՈԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-530-10.03.2023,05.04.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխությունը, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»					
1.	Կառավարություն	Օրենքի նախագծի 6-րդ հոդված	Օրենքի նախագծի 6-րդ հոդվածում «աշխատանքային օրը» բառերը փոխարինել «օրվանից» բառով՝ օրենքների նախագծերի փաթեթում ներառված օրենքների ուժի մեջ մտնելու ժամկետները միմյանց համապատասխանեցնելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է